ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ԿՖԿՏՀ) ԾՐԱԳՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-ԿՖԿՏՀ-26/2-1

ք. Երևան «04» հունիսի 2026 թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՀՀ քաղաքացի Հասմիկ Օրդուխանյանը (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար՝ «Հայաստանի հանրապետության և եվրասիական զարգացման բանկի միջև «Հայաստանի հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների որակի բարձրացում» ծրագրի ֆինանսավորման համար կայունացման եվ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման մասին համաձայնագրի շրջանակներում կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի կառավարման (ԿՖԿՏՀ) ծրագրի գնումների մասնագետի խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Յուրաքանչյուր ամսվ համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա առաջին տասնօրյակը Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

Կատարողը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո պետք է ներկայացնի եռամսյակային հաշվետվություն, եթե այդ մասին առկա է Պատվիրատուի գրավոր պահանջը:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 13,056,000 (տասներեք միլիոն հիսունվեց հազար) ՀՀ դրամ: Ծառայությունը մատուցվելու է ամսական կտրվածքով և յուրաքանչյուր ամսվա համար մատուցվող ծառայության արժեքը կազմում է 1,632,000 (մեկ միլիոն վեց հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման առաջադրանքների արժեքները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-

ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրությունը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա հւսմար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Ֆինանսական միջոցներ նախատեսվելուն պես կողմերի միջև կնքվող համաձայնագրի ստորագրման պահից: Ֆինանսական միջոցներ նախատեսվելուն պես կողմերի միջև կնքվող համաձայնագրի պայմանները տարածվելու են կողմերի միջև 2026թ. մայիսի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք

բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օր Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ քաղաքացի Հասմիկ Օրդուխանյան
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ք. Երևան, Բաղրամյան 4-րդ նրբանցք, տուն 40
ՀՎՀՀ՝ 02629081	անձնագիր AU0494646
Հ/Հ 900000911991	«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ՝ 1150011996336379
ՖՆ գլխավոր քարտուղար	**ՀՀ քաղաքացի՝**
Հ. Հարությունյան	Հ. Օրդուխանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
«04» հունիսի 2026 թ. կնքված
ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-ԿՖԿՏՀ-26/2-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ծառայության մատուցման հասցեն և ժամկետը
1	79411210	Տեխնիկական բնութագիրը ստորև ներկայցվում է*	դրամ	13,056,000	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուն պես կողմերի միջև կնքվող համաձայնագրի պայմանները տարածվելու են կողմերի միջև 2026թ. մայիսի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների վրա: Ծառայության մատուցման ժամկետն է՝ 01.05.2026-31.12.2026: Ծառայության մատուցման հասցեն է՝ ք.Երևան Մելիք- Ադամյան 1

* ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնումների մասնագետի կողմից մատուցվող ծառայություններ են.

- Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների որակի բարձրացում» Ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) գնումների ոլորտին առնչվող փաստաթղթերի պատրաստում և թարմացում, այդ թվում՝ Գնումների պլանի, Գնումների ռազմավարության, ինչպես նաև գնումների իրականացման ընթացքի և արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների կազմում, ներառյալ գնումների ռազմավարական պլանավորման, գնումների մեթոդների ընտրության, ռիսկերի գնահատման և գնումների ժամանակացույցերի մշակման աշխատանքները;
- Գնումների պլանի, պլանի շրջանակներում համապատասխան փոփոխությունների, վերանայումների իրականացում, խմբագրում, ներկայացում Կառավարչին՝ համաձայնեցման, ղեկավարին՝ հաստատման համար;
- Աջակցություն և մասնակցություն ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների տեխնիկական բնութագրերի և սպեցիֆիկացիաների մշակման գործընթացում, ներառյալ միջազգային լավագույն փորձին և ԿՀԵՀ պահանջներին համապատասխան տեխնիկական պահանջների, գնահատման չափանիշների և պայմանագրային պահանջների մշակման գործընթացների համակարգումը;
- Մրցութային փաստաթղթերի պատրաստում՝ ԿՀԵՀ գնումների քաղաքականության և ընթացակարգերի պահանջներին համապատասխան, ինչպես նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների

կիրառելի ընթացակարգերի, պայմանագրային և գնումների լավագույն փորձի պահանջներին համապատասխանության ապահովմամբ;

- Մրցութային փաստաթղթերում փոփոխությունների և պարզաբանումների իրականացման նախագծերի պատրաստում;
- Գնումների գործընթացների անցկացում, բոլոր փուլերի իրականացում/ուղեկցում՝ ներառյալ փաստաթղթերի հրապարակումը, գնումների մասնակիցներին պարզաբանումների տրամադրումը, գնահատման հաշվետվությունների և դրանց հետ կապված բոլոր հարակից փաստաթղթերի պատրաստումը, հնարավոր պայմանագրային կողմերի հետ բանակցությունների վարումը, պայմանագրերի ստորագրման կազմակերպումը, ներառյալ բազմափուլ, միջազգային և բարձր արժեք ունեցող գնումների համակարգումը, բանակցությունների կազմակերպումը, պայմանագրային ռիսկերի գնահատումը և շահագրգիռ կողմերի միջև գործընթացների համակարգումը;
- Որպես ծրագրի շրջանակներում իրականացվող մրցութային գործընթացների գնահատող հանձնաժողովների (ԳՀ) քարտուղար/մրցույթի համակարգող ԳՀ աշխատանքների կազմակերպում՝ առաջարկների ընդունում և արձանագրում, փաստաթղթերի կազմում և ԳՀ-ի հաստատման ներկայացում, գնումների ընթացակարգերի վերաբերյալ պարզաբանումներ տրամադրում, ինչպես նաև գնահատման գործընթացների համապատասխանության վերահսկում, գնահատման արձանագրությունների և որոշումների իրավական/ընթացակարգային ամբողջականության ապահովում;
- Գնումների ոլորտում Ծրագրի իրականացման ռիսկերի բացահայտում և գնահատում, ինչպես նաև դրանց նվազեցման նպատակով առաջարկությունների մշակում, ներառյալ պայմանագրային, ժամանակացույցային, մրցակցային և կատարման ռիսկերի մշտադիտարկումը և կանխարգելիչ միջոցառումների առաջարկումը;
- Հաշվի առնելով, որ «Design, Development and Deployment of the Government Financial Management Information Systems (GFMIS)» գնման գործընթացը հանդիսանում է բազմափուլ, բարդ միջազգային գնումների ընթացակարգ, ինչպես նաև այն հանգամանքը, որ համաֆինանսավորող կողմ ԿԶԵՀ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև ձեռք բերված համաձայնության համաձայն՝ գործընթացն իրականացվելու է առանց ԿԶԵՀ-ի անմիջական ուղեկցման/միջնորդության, ապահովել գնումների ամբողջ գործընթացի ինքնուրույն և ամբողջական համակարգումը՝ ներառյալ գնումների պլանավորումը, մրցութային բոլոր փուլերի փաստաթղթերի մշակումը, պարզաբանումների և փոփոխությունների գործընթացների համակարգումը, գնահատման գործընթացների կազմակերպումը, բանակցությունների համակարգումը, համապատասխան գնահատման հաշվետվությունների, արձանագրությունների և ընթացակարգային փաստաթղթերի մշակումը և պատրաստումը, ինչպես նաև շահագրգիռ կողմերի և մասնակիցների հետ մասնագիտական հաղորդակցության իրականացումը:
- Մրցութային գործընթացների մասնակիցների կողմից ներկայացված բանկային երաշխիքների ստուգում, գործողության ժամկետների վերահսկում (մրցույթին մասնակցության երաշխիք, աշխատանքների կատարման երաշխիք և այլն);
- Նոր նախատեսվող միջազգային գնումների գործընթացների շրջանակներում ապահովել խորհրդատվական կազմակերպությունների ընտրության գործընթացների ամբողջական համակարգումը, ներառյալ համապատասխան մրցութային փաստաթղթերի պատրաստումը, գնահատման գործընթացների կազմակերպումը և ընթացակարգային համապատասխանության ապահովումը: Մասնավորապես, ապահովել խորհրդատվական կազմակերպության ընտրությանն ուղղված միջազգային գնումների նոր ընթացակարգի կազմակերպումը՝ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտի իրականացման նպատակով՝ համաձայն ԿԶԵՀ-ի միջոցներից ֆինանսավորվող Դրամաշնորհային համաձայնագրի պահանջների, ներառյալ՝ Հատուկ հաշիվների ֆինանսական հաշվետվությունների ճշտության և արժանահավատության ստուգումը՝ համապատասխան կատեգորիաների շրջանակներում, ապահովելով գնումների գործընթացի պատշաճ, ժամանակին և կիրառելի ընթացակարգերին համապատասխան իրականացումը:
- Պայմանագրերի կատարման մոնիտորինգ (պայմանագրերի կառավարում), ներառյալ կատարման ժամկետների, վերջնաժամկետների և արդյունքների հետևում, պայմանագրերի լրացումների և փոփոխությունների նախագծերի մշակում, պատրաստում, ստորագրման ներկայացում և գործընթացի կազմակերպում, ինչպես նաև պայմանագրերի կատարման ընթացքի համակարգում, պայմանագրային պարտավորությունների վերահսկում, խնդիրների վերհանում և շահագրգիռ կողմերի հետ պայմանագրային հարցերի համակարգում;
- Պայմանագրերի պայմանների, ինչպես նաև ԿԶԵՀ գնումների քաղաքականության, ընթացակարգերի և պայմանների հետ համապատասխանության ապահովում;

- Գնումների անցկացման գործընթացների վերաբերյալ Ծրագրի իրականացման խմբի առաջարկությունների և խորհրդատվական աջակցության տրամադրում;
- Ծրագրի շահագրգիռ կողմերի և ԿՀԵՀ-ի ներկայացուցիչների հետ համագործակցություն գնումների քաղաքականության և ընթացակարգերի կիրառման վերաբերյալ;
- Ապրանքների/աշխատանքների/ծառայությունների շուկայի վերլուծություն (այդ թվում՝ մատակարարների/կապալառուների/խորհրդատուների շուկայի հագեցվածությունը, ապրանքների/աշխատանքների/ծառայությունների համաշխարհային և ներքին գների միջին մակարդակը որոշելու նպատակով), ներառյալ միջազգային և տեղական շուկաների ուսումնասիրություն, գնային միտումների գնահատում, մրցակցային միջավայրի վերլուծություն և գնումների արդյունավետության բարձրացման առաջարկությունների մշակում;
- Ծրագրի շրջանակներում գնումների գործընթացներին առնչվող վերլուծական գրառումների, հաշվետվությունների և այլ փաստաթղթերի պատրաստում, ներառյալ ղեկավարության և ֆինանսավորող կազմակերպությունների համար ներկայացվող հաշվետվությունների, տեղեկանքների և վերլուծական նյութերի մշակում;
- Ծրագրի շրջանակներում գնումների փաստաթղթերի պահպանման և փաստաթղթաշրջանառության կազմակերպում;
- Գնումներին առնչվող բոլոր փաստաթղթերի և նամակագրության վարում, ներառյալ՝ թարգմանությունները, ներքին որոշումները, ինչպես նաև գնումների հետ կապված նյութերն ու հրապարակումները;
- Ծրագրի շրջանակում, Ծրագրի բոլոր հոդվածների և գնումների վերաբերյալ բոլոր նորությունների պահպանում;
- Ծրագրի իրականացման ողջ ընթացքում մասնակցություն Ծրագրի փաստաթղթերի մշակման, վերանայման և արդիականացման գործընթացներին մասնակցություն;
- Ծրագրի արդյունավետ և ժամանակին իրականացման նպատակով Ծրագրի ղեկավարի կողմից հանձնարարված այլ առաջադրանքների իրականացում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ քաղաքացի Հասմիկ Օրդուխանյան
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ք. Երևան, Բաղրամյան 4-րդ նրբանցք, տուն 40
ՀՎՀՀ՝ 02629081	անձնագիր AU0494646
Հ/Հ 900000911991	«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ՝ 1150011996336379
ՖՆ գլխավոր հաշտուղար	**ՀՀ քաղաքացի՝**
Հ. Հարությունյան	Հ. Օրդուխանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2
«04» հունվար 2026թ. կնքված
ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-ԿՖԿՏՀ-26/2-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայությունների															
Չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատես-ված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդա-մենը
1	79411210	Գնումների մասնագետի խորհրդատ-վական ծառա-յություններ	-	-	-	-	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900000911991
ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար

_____ Հ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ քաղաքացի Հասմիկ Օրդուխանյան
ք. Երևան, Բաղրամյան 4-րդ նրբանցք, տուն 40
անձնագիր AU0494646
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1150011996336379
ՀՀ քաղաքացի՝

_____ Հ. Օրդուխանյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
«04» հունիսի 2026թ. կնքված
ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-ԿՖԿՏՀ-26/2-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«04» հունիսի 2026թ. կնքված
ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-ԿՖԿՏՀ-26/2-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն